ձգին Կի-ուէլ-փէրէ (Թուխ) լերինք և դառնան զՀաբաւով Ծովուն, Էրճէրօշ և Արքոս լերինք, և հուսկ 'ի Ծովեզրն նա և 'ի ներքս իսկ սարաւանդեալ Ընչոփխար կամ Կապուտփող լեառն բարձր. դեռ Արտոսայ երկայնեալ դառնայ ընդ արևելս և խառնի 'ի Քաֆիլան-գոհ, որ 'ի հեռուստ պատէ զարևելեայ կողմն և դարձեալ ընդ հիւսիս՝ սպառի յԱլատաղն սահմանս, արձակելով ընդ արևմուտս ոստս զուգահեռականս լերանց, որոց ուղղահայեաց ինն ամբառնայ Ժամուք ինչ հեռի 'ի Ծովափանցն՝ բարձրն Վարագ, և յելից խառնի ընդ միոյ յոստոցն։ Յարևելեան շրջանակ լերանցս կցին յայնմ կողմանէ բազուկք ինչ լերանց Աղրպատականի, որոքք 'ի մի մեծ պար մարթի է գրել զերկոսին միանգամայն։

11. Ժ. ԿՈՐԴՈՒՈՑ ԼԵՐԻՆՔ անուանիք 'ի վաղնջուց դարուց, այլ չեւ ևս քաջ քննեալք և ջափեալք. 'ի հնումն սահման հատանէին 'ի հարաւոյ կողմանէ ընդ Հայս և ընդ Ասորեստանեայս. գլխաւոր և գօտևոր պարք և կոյտք լերանցն են ընդ 37° լայնութեան, յարևելից ձգեալ ընդ մուտս և ընդ 2° և 3° արևմտեան երկայնութեան Մասեաց, յոր կողմանէ ձգին ցՊագման օժանդակն Տիգրիսի, իսկ յելից կուսէ ցՓոքրն Զապ, ընդ մղոնս աւելի քան զհարիւր, և կոչին այժմ Ճիուպի կամ Ճիուպիպ և Քուրիի լերինք. յորս են ձիւնապատ և բարձրածայր կատարք, որպէս Թուի 12-14000′ բարձունք. ընդ սոցա համարին և Լէրինի Պուհդան և Մոկոյ աշխարհի որք ընդ մէջ Վանայ և Կորդուաց. յորս Ամանոս լեառն անուանի յելից կուսէ, և յելից նորա Թոխոս, յորում և անցք Ճանապարհի բարձր որպէս կարծի իբր 10000′. իսկ յարևմտեան հարաւ Վանայ և 'ի հարաւոյ Բաղիշու՝ լերինք Զըրգանոս, Կարսավէրա, և այլն։ Սնծանօթ է համարեն միջավայրն Մոկաց և Կորդուաց. իսկ ըստ հարաւոյ ձգեն լերինքս ցգեան խաբուր և ցԶոխոս թեւս, որք և յեռին սահմանք են Հայոց։ Յելից Կորդուաց 'ի խաղս Զապ գետոց ընդ 1° արևմ. երկ. Մասեաց կան աղխաղեք և կոյտք Հապէնբրի և Թիարի լերանց, յանուն Քրդաց գաւառին Ջուլամերկոյ, յորս և Քաղդէացիք քրիստոնեայք բնակեն. բազում սեպուհ և բարձր կատարք են 'ի նոսա և խորառորք և պէսպէս անհեղեղ և ահաւորահայեաց կերպարանք քան 'ի Գարապաղ. բարձրագոյն ամենայն լերանցն Ճանաչի անպարն Թուրա Ճէլու կամ Ճուրբաղ յելից այլոցն, և յոմանց՝ Մասեաց հաւասար կարծի բարձրութեամբն, կամ ոչ շատ պակաս. 'ի հիւսիսի Ջուլամերկոյ կայ Շէմբաբ (Սմբատ) լեառն բարձր աւելի քան զ'8000′, և 'ի նորին հիւսիսոյ Պուրճանուլկի? յորում և անցք են յ'7092′ բարձու։

12. ԺԱ. ՋԱԿՐՈՍ լերանց պար յելից հարաւոյ աշխարհին Հայոց 'ի Պարսից կողմանց ձգի ընդ արևմուտս հիւսիսոյ և սահման հատանէ ընդ Հայս, ձգեալ ցմէջս Ծովուցն Վանայ և Որմիոյ. 'ի նախնեաց օտարաց կոչի Զարիս կամ Զակրոս, և հիւսիսայինքն 'ի լերանցն 'ի Հայս՝ Կուհապրէնտ (որ Թուի նշանակել Հրոյ-Լերինք). յերկայնաձիգ պարուս 'ի բուն Զակրոս լերինս ընդ մէջ Սօլտրզ և Բէվանտրզ գաւառաց՝ ամբառնայ Շէնիվի? լեառն 10-10500′, և հուսկ 'ի հիւսիսոյ նորա լեռնանցքն Քէլի-Շին 9300′, և սեպագիր արձան 'ի բարձու անդ, որ ինձ Թուին արձանք սահմանաց Հայոց 'ի Զարասպ լերին՝ յաւուրց անտի Արամայ։ Ի մէջ պարուս և ընդ մէջ լերանց Հէքեարեայ կայ միւս աղխաղակոյտ Ռէվանդզ լերանց, յորս բուն Բէվանտրզ լեառն բարձր 9900′. և այլ լերինք Բիրան, Ասպէնոհ?, Լիմիֆա, Զոխ-Ուէլ, և այլն։ Իսկ յելից կողմանէ ոստք անջատք ձգին ընդ մէջ նորա և Ծովուն Որմիոյ ցսահմանս Սալմասայ, զորս և Որմեան լերինս մարթ է կոչել. զի և 'ի գաւառին Որմիոյ բովանդակին. բայց այս վայրք չեն քաջ ծանուցեալք, մանաւանդ արևմտակողմանքն բընակեալք 'ի Քրդաց։ — Զերկոսին զայսոսիկ խումբս լերանց զԿորդուացն և զԶակրոս, և զամենայն լերինս հարաւոյ Հայաստանեայց՝ արժան է համարել արևելեան ողնաշար հսկայակերպ պարու Տաւրոս լերանց, որ ըստ նախնեաց՝ յարևելից կուսէ ձգի ցՊարսկաստան ընդ Աղրպատական, այլ ըստ արդեաց՝ սկսանի 'ի ձախմէ Եփրատայ 'ի մէջ Դ Հայոց և Աղձնեաց. իսկ ընդ արևմուտս ձգի ըստ հարաւոյ Փ. Ասիոյ ցարևմտեան հարաւային եզր նորա. բազուկ մեծ ընդ հիւսիս և արևմուտս արձակելով զԱնտիտաւրոս, ընդ մէջ Կիլիկիոյ, Կապադովկիոյ և Հայոց Մեծաց առ Եփրատաւ. և միւս բազուկ ընդ հարաւ զԱմանոս, ընդ մէջ Միջերկրական ծովու յարևելից՝ և Ասորւոց երկրի. իսկ անջրպետեալն յԵփրատայ բազուկն որ 'ի հարաւոյ Աղձնեաց՝ ընդ մէջ Հայոց և Միջագետաց ձգի՝ Մասիոս կոչէր 'ի հնումն և այժմ Գարաճա պաղլար, որ 'ի հարաւոյ Տիգրիսի ձգի և խառնի ընդ լերանց Կորդուաց (11). իսկ որ 'ի հիւսիսոյ Տիգրիսի ձգի բազուկն Աղձնեաց (Խաղլու) ցլերինս Վանայ՝ Նպոպական կոչէր առ հինն, և ըստ ումանց անդ 'ի սահմանս ծովուն Բզնունեաց յանգէր Տօրոս։

13. ԺԲ. Պար 'ի հիւսիսոյ Որմիոյ և յելից Քաֆիլան լերանց, և 'ի հարաւոյ Երասխայ՝ կան ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ լերինք, զուգահեռական գրիւք, յորոց հարաւային և երկայնաձիգն պար 'ի բազկէն Սաւալանայ ձգի ցԿոֆիլան, և են լերինքն գլխաւոր Աֆպաղ, Միղրապաղ, Ալանպէր, Քուհի-Մաղրոտ, Էրլան, որ կցի 'ի Քաֆիլան. յորոց հարաւոյ ձգի իբր ոստ անջատ Ագռանուլ? լ. 7500′-9000. և 'ի նորին հարաւոյ Մուր կամ Մուղ լեառն 8440′. յելից կողմանէ 'ի հիւսիսոյ Ակաղի որ է յելից Մարանդայ՝ ձգի թեւ մի Քոֆան-պաղ անուն, յորում Մէրան, Քէմ, և Նշան լեառն որ տարածէ ոստս ցԵրասխ և ցօժանդակս նորա ընդ արևմուտս։ Ի հիւսիսոյ պարուս և Քուրուր (Կոտոր) կամ Ակ գետոյ՝ ձգին այլ լերինք, յորս յարևմտակողմն Եշլան-պաղ, և Լէրինի Հաղիանէոյ (որ է վիճակն Զորս) և Աբրան-պաղ. յորոց հիւսիսոյ միւս ևս զուգահեռական Շէրիխանէ լերանց 'ի հարաւոյ Զալտրրան և Գարաքոյունլու գաւառի, յորոց և Թեւ մի ձգի ընդ հիւսիս 'ի Մակու։ — ԺԳ. Յելից Վասպուրական լերանց և Զակրոսի և 'ի հարաւոյ Երասխայ՝ 'ի մեծի բարձրաւանդակին ԱՏՐՊԱՏԱԿԱՆ՝ (որ ոչ համարի ընդ բուն Հայս) ոչ սակաւ աղխաղեք են լերանց և անխաղաց բարձունք, յորոց յիշեսցուք զսա-